

«ԱՐՏԱԽՈՒՐ ԽԱՒԱՐՏ»-Ի ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

Հ. Կ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

1. Հայ մատենագրության ամենամոթ ու առեղծվածային խնդիրներից մեկը հորինացող հիշատակած մի հայտնի վիպասանական հատվածի մեկնարանումն է.

Այլև տենչալ, ասեն, Սաթինիկ տիկին տենչանս՝
Ձարտախուր խաւարտ և զտից խաւարծի
Ի բարձիցն Արդաւանայ՝

Չանդրադառնալով արտախուր, խաւարտ, տից և խաւարծի բառերի վերաբերյալ բաղձաթիվ մեկնություններին², որոնցից շատերը լուրջ չեն, կարելի է ընդհանուր առմամբ ընդունելի համարել տից և խաւարծի բառերի հետևյալ բացատրությունները:

¹ Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց. Տիգրիս, 1913, էջ 84 I 1 (1ա):

² P. de Lagarde. Armenische Studien Göttingen, 1877, S. 53; К. П. Патканов. Материалы для армянского словаря. СПб. Вып. 1, 1882, с. 24; вып. 2, 1884, с. 44—45; Ե. Դավթյան. Նամակ ներքին Աղուիսից.—«Արձաղանք», 1886, № 39, էջ 495; Մ. Էմին. Մովսես Խորենացի և հին հայկական վեպ. Բիֆլիզ, 1887, էջ 63; Ա. Բաժաբյան. Հին հայոց տաղաչափական արվեստը. Շուշի, 1891, էջ 78 (ծան. 1); Ա. Քիչմիշյան ց. Բույսերի մեծարանքը.—«Մուրճ», 1891, № 2, էջ 239—240; Բ. Պետկեյրյան. Բանադատություն.—«Հանդես ամսօրյա» (այսուհետև՝ ՀԱ), 1892, № 12, էջ 366; G. Chailant. Zur Erklärung der armenischen Geschichte des Moses von Chorene.—Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1893, VII Band, 1 Heft, S. 27—28. Խ. Յա. Մառի անտիկ նամակներից.—«Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 137—139; Монсей Хоренский. История Армян, М., 1893, с. 45. 235 (прим 101). Գ. Տեր-Մկրտչյան. Հայկական. Ա-ԺԲ, Վաղարշապատ, 1894, էջ 35—59; Հ. Թուրմանյան ց. Խորենացու «Տենչայր Սաթինիկ» հատվածի առթիվ.—«Հորիզոն», 1894, դիրք 1-ին, էջ 168—176; Ղ. Ալիշան. Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն. Վենետիկ, 1895, էջ 64—65; Մովսես Խորենացու Հայոց Պատմութիւն. Ս-Պետերբուրգ, 1897, էջ 69, 390 (ծան. 171); Մ. Արեղյան. Երկեր. հ. 1, Երևան, 1966, էջ 174; R. von Stackelberg. Beiträge zur persischen Lexicographie.—Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1901, XV Band, 4. Heft, S. 381—382; Հ. Ն. Անդրիկյան. Դիտողություններ Գողթան երդերու վրա.—«Բաղձավեպ», 1906, № 3, 106—107; Բ. Լպ. Գեորգյան. Ցուրացնում են ուրիշի վաստակը.—«Հովիվ», 1906, № 9, էջ 133—135; Հ.Հ.Տ. Հայտնություն Հովհաննու.—ՀԱ, 1906, № 3, էջ 78; Գ. Նահապետյան. Եվս քակամա պատասխան.—«Հովիվ», 1906, № 22, էջ 345—346; H. Hübschmann. Armeniaca.—Indogermanische Forschungen. 1906. XIX Band: S. 458; Հ. Աճառյան. Հայերեն ըստողարանություններ.—ՀԱ, 1908, № 4, էջ 124; Ա. Բահաբյան. Նամակ խմբագրության.—«Հովիվ», 1908, № 26, էջ 415—416; Ա. Քիչմիշյան ց. Նամակ խմբագրության.—«Հովիվ», 1908, № 22, էջ 351—352; Սիոն վարդապետ. Լուսարանություն Ձարտախուր խաւարտ-ի տենչանայն Սաթինիկա.—«Հովիվ», 1909, № 15, էջ 235—237; Շ. Սահակյան. Բացատրություն մը Խորենացու «Տենչայր Սաթինիկ» հատվածի մասին.—ՀԱ, 1911, № 6, էջ 334—347; Հ. Կ. Սահակյան. Սաթինիկ Երզնի բառական և քնարերգական խմբատը.—«Բաղձավեպ», 1911, № 8, էջ 345—352; Հ. Վ. Հաջոյանի. Ժաշեր և խնճույք

Շ. Սահակյանը տից-ը նույնացնում է Համշենի բարբառում պահպանված տից «փունջ» (հմտ. տից մը վարդ, տից մը մանուշակ ևն) բառի հետ³:

Խաւար(ա)ծի-ն հայտնի է ոսկեդարյան մատենագրության մեջ «փափուկ, մատղաշ շիվ» նշանակությամբ⁴, հմտ.՝ «<...> կանգնեցան կացին՝ արմատք եւ ուտք, կողր եւ տերեւ խաւարածի եւ ծաղիկ, բաժակ, ողկոյզ, գնդակ, պատաղիճ» (հուն. բնագրում՝ Ψαυτὸς 'ծիլ, շիվ, բոգբոջ')⁵; «<...>, ինքեանք փափուկք, ե պէսպէս դարմանօք օր րստ օրէ ես քան զեւ իբրև զխաւարծի փափկանային, <...>»⁶:

Այսպիսով, տից խաւարծի նշանակում է «մատղաշ շիվերի փունջ»:

Ավելի բարդ է արտախուր խաւարտ բառակապակցության հարցը: Ամենատարածված մեկնությունը երկու բառն էլ ներկայացնում է որպես բուսանուն⁷: Ոսկեդարյան մատենագրության մեջ, իրոք, կա խաւարտ «կանաչեղեն, ուտելի բանջարեղեն» բառը⁸, սակայն դժվար թե դա՝ ինքն Սաթենիկի տեղնաչափի առարկան: Քիչ հավանական է նաև արտախուր բառի բուսանուն լինելը, քանի որ նրա բխցումը պր. zardxau-ից հնչյունական դժվարություններ է հարուգում: Մասնավորապես նշելի է, որ զարախուր ձևում զ-ն նախդիր է, ուստի բառակապակցում արմատական զ-ի առկայության դեպքում սպասելի էր *զզարախուր: Մ. էմինն այս բառը համեմատում է արտախուր «թագ»⁹ բառի հետ¹⁰, սակայն քննվող հատվածի գրեթե բոլոր ընթերցվածներում առկա է արտախուր ձևը (միայն երկիցս արտախուր, որ, ամենայն հավանականությամբ, «թագ» նշանակությամբ նմանահունչ բառի ազդեցությամբ պայմանավորված ուղ աղավաղում է):

Հետևաբար արտախուր խաւարտ բառակապակցությունը մնում է մոթ:

2. Սաթենիկը այանուհի էր, ուստի, փակուղուց դուրս դալու համար, ետքի է դիմել օսական տվյալներին: Զարմանալի է, որ նման փորձ, որքան ինձ հայտնի է, առհասարակ չի արվել:

Օսերենում օջախի կրակի ծխական անվանումն է՝ իրոն. Aert-xūr-on՝ դիգոր. Aert-xor-on, որ կազմված է art «կրակ» (ձայնավորի թուլացումով)

Հին Հայաստանի մեջ. Վենետիկ, 1912, էջ 142—143; Լևոն. Հայոց պատմություն. հ. 1, Թիֆլիս, 1917, էջ 526; Լ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). Երևան, 1971—1979, հ. 1, էջ 340—342, հ. 2, էջ 351—352; Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1961, էջ 134, 374 (ձան. 65); Ս. Ավդալբեկյան. Սիրո ծառը.— «Գրական թերթ», 1969, № 19, էջ 4; Բ. Ուլուրբյան. Մեծերին զգուշ ձևը տվեք.— «Գրական թերթ», 1969, № 22, էջ 3; Շ. Ս. Գրիգորյան. Հայոց հին գուսանական երգերը. Երևան, 1971, էջ 44, 48 (ձան. 1); Նորայր Բյուզանդացի և Մարտիրոս Մինասյան. Մովսեսի խորենացու պատմություն Հայոց (ժող.). Ժնև, 1991, էջ 58 (ձան. 151); Վ. Համբարձումյան. Խորենացու «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը.— «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակը» միջազգային գիտաժողովի դրույթներ. Երևան, 1991, էջ 25—27:

3 Շ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 336—337:

4 Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 351:

5 Բարսեղ Կեսարացի. Յաղագս վեցարեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի. Երևան, 1984, էջ 145, 374:

6 Ցովհաննու Ոսկերեքանի Մեկնութիւն թղթոցն Պաղոսի. հ. 1, Վենետիկ, 1862, էջ 814:

7 P. de Lagarde. Op. cit., S. 53; К. П. Патканов. Указ. соч., вып. 1, с. 24, вып. 2, с. 44—45; G. Chahatiantz. Op. cit., S. 27—28; R. von Stackelberg, Op. cit., S. 381—382.

8 Տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 351—352:

9 Այս բառի ստուգաբանության ջրլուր տե՛ս Լ. Շ. Հովհաննիսյան. Հայերենի իրանական փոխառությունները. Երևան, 1990, էջ 234:

10 Մ. էմին. նշվ. աշխ., էջ 63; Монсей Хоренский, Указ. соч., с. 235 (прим. 101):

ու $x\ddot{u}r/x\ddot{o}r$ «արև» բառերից և -ոն հայրանվանական ածանցից¹¹: Գործ ունենք իրան. * $a\ddot{u}r-x\ a\ddot{r}\ddot{a}na$ -կաղապարի հետ, հմմտ. սրբազան կրակի իրան. Aturšatnaba ; անվանումը¹²: Երկրորդ բաղադրիչը * $x'\ddot{a}rdna$ -«լույս», «փայլ», «արև» ~ «բարեբեր ճակատագիր, ֆառն» հայտնի բառն է, որ հանդես է դալիս նաև որպես դիցանուն¹³: Արմատն առկա է նաև օս. Rovnaenar «Վենեբրա մոլորակ» (բառացի՝ «բացվող օրվա ֆառն») բառի կազմում¹⁴: Տիպաբանորեն հմմտ. աբքադ. Ištaru «բախտ, ճակատագիր», «թագավորական հաջողություն», որի հիմքում ընկած է Վենեբրա մոլորակով խորհրդանշվող Իշտար դիցուհու անունը¹⁵:

Ինչպես $x'\ddot{a}rdna$ - «լույս», «փայլ», «արև» արմատն է $X'\ddot{a}rdna$ - դիցանվան կողքին հանդես դալիս «բարեբերություն», «բախտ, հաջողություն», «փառք» իմաստներն արտահայտող հասարակ բառերի տեսքով¹⁶ (հմմտ. նաև մ.-պրս. fagr > հայ. փառ-ք; * $\text{duš } x'\ddot{a}rdn$ - «վատ ֆառն ունեցող» > հայ. քշուտ «դժբախտ, ողորմելի»), այնպես էլ նույն արմատը որպես իր կազմի երկրորդ բաղադրիչ ունեցող օս. AERT-xur-on դիցանվան կողքին կարելի է ենթադրել նմանատիպ նշանակությամբ բառի գոյությունը, մանավանդ որ AERT-xur-on -ին ուղղվում էին հարստություն ու բարօրություն խնդրող աղոթք-դիմումներ¹⁷: Սաթենիկը, բնականաբար, կարող էր տեղի վրա բարեբերություն, արքայական ֆառն ևն, այն էլ իր հարազատ լեզվի դիցաբանների միջոցով:

Իրանական նշված կաղապարը հանդես է դալիս նաև բաղադրիչների հակառակ դասավորություն ունեցող տարբերակով՝ * $x'\ddot{a}r-a\ddot{u}r$ -, հմմտ. սողդ. xōr-ar (շօր'ը) «արեգակնային կրակ»¹⁸, նաև նույն օսերենում՝ $\text{Xur-ae(r)it-xur-on}$. աստվածություն, որին դիմում էին Աստծու առջև միջնորդելու խնդրանքով՝ ակնկալելով առատաձեռնություն¹⁹, ի՞նչ արտնական շրջանի համար կարելի է վերականգնել * $X'\ddot{a}r-aert$ - նախաձևը, ապա դրանից, xv > xav զարգացմամբ²⁰ և ar հնչյունախմբերից մեկի ամփոփմամբ (haplologie), կարող էր ստացվել հայ. խաւարտ. * xvar-aert > *խաւ(ար)-արտ > խաւարտ

¹¹ Հմմտ. В. Миллер. Осетинские этюды. Ч. 2. Исследования. 1882, с. 266—267; В. И. Абаев. Историко-этимологический словарь осетинского языка. Т. I. М.—Л., 1958, с. 182; Ж. Дюмезиль. Скифы и парты (пер. с фр.), М., 1990, с. 112—113.

¹² Sb'u В. Н. Топоров. Фарн.—Мифы народов мира (Энциклопедия). Т. 2, М., 1982, с. 558.

¹³ Sb'u М. Дрезден. Мифология древнего Ирана.—В кн. Мифология древнего мира (пер. с англ.), М., 1977, с. 356—357.

¹⁴ Sb'u В. И. Абаев. Указ. соч., с. 267; М. Н. Боголюбов. Иранские названия Утренней звезды.—Вопросы языкознания, 1989, № 4, с. 88.

¹⁵ Sb'u А. Онпехейм. Древняя Месопотамия. Портрет погибшей цивилизации (пер. с англ.), М., 1990, с. 162—163.

¹⁶ Իմաստային զարգացման համար հմմտ. հնդ.-եվր. * k(e)uk- «լույս», «փայլ» > հայ. շուր «փառք», «վեհություն»:

¹⁷ Sb'u В. И. Абаев. Указ. соч., с. 182; Б. А. Калоев. Артуроп.—Мифы народов мира (Энциклопедия). Т. I, М., 1980, с. 109.

¹⁸ Sb'u В. И. Абаев. Указ. соч., с. 182.

¹⁹ Sb'u Б. Гатнев. Суверния и предрассудки у осетин.—Сборник сведений о кавказских горцах. Вып. X, Тифлис, 1876, отд. III, с. 58; В. Миллер. Указ. соч., с. 266—267; Ж. Дюмезиль. Указ. соч., с. 113.

²⁰ Հմմտ. սկյութ. * kvanak ~ հայ. Հաւանակ (անձնանուն), տե՛ս Գ. Բ. Զատնիկյան. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները.—«Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 58:

Այս զարգացմանը կարող էր նպաստել նաև խաւարծի բառի հետ հնչյունական ներդաշնակությունն ուժեղացնելու պոետական միտումը:

3. Հնդիրանական աշխարհում ծեսերն ու աղոթքը կատարում էին հատուկ հարթակի վրա, որը ծածկում էին խոտով կամ ճյուղերով, հմմտ. հ-հնդկ. *barhís* «խոտի ծխական փոոց», ավեստ. *barəzīš* «բարձ», «ծածկոց» (որի միջին իրանական ցեղակցից՝ վիպասանական քննվող հատվածի բարձ, -ի բառը), *barəsmān* «ճյուղերի կապոց, որ կրակապաշտները աղոթքի ժամանակ բռնում էին իրենց ձեռքին՝ սրբազան կրակի առջև»: Վերջինիս վերաբերյալ հմմտ. Եզնիկի հայտնի վկայությունը («<...>. և առեալ զբարսմունսքն՝ զոր ի ձեռն իւրում ունէր, որովք զյաշտն առնէր, ետ ցորմիղդ <...>») ²¹ և ավեստ. *barəsmo. zastō frayaz-* «զոհաբերություն կատարել ճյուղերը ձեռքին» բանաձևը ²²:

Ինչպես տեսնում ենք, բոլոր տարրերն առկա են «Տենչայ Սաթինիկ տիկին...» հատվածում. սրբազան կրակ (աւտախուր և խաւարտ). ճյուղերի կապոց (տից խաւարծի), ծխական բարձ (ի բարձիցն):

4. Այս կերպ, թվում է, պարզվում են հատվածի բոլոր մութ բառերը և նրանում արտացոլված աղոթք-ծեսի ընդհանուր նկարագիրը: Սակայն վիպասանական այս փոքրիկ նմուշի հստակ թարգմանությունն ու մեկնաբանությունը պահանջում են կովկասա-իրանական նյութի հանգամանալից քննություն: Որպես աշխատանքային վարկած կարելի է առաջարկել այսպիսի տարբերակ.

«Սաթենիկ տիկինը տենչալով տենչում է աւտախուր խաւարտ (resp. բարսորություն) «բախտ», «երջանկություն» «ֆառն») և Արգավանի ծխական բարձերից՝ ճյուղերի կապոց (որը՝ ծխական, տվյալ դեպքում գուցե և սիրահարույց հմայական արժեք ունի):»

Եթե այստեղ կա նաև ֆալլոսային նրբերանդ, ապա հետաքրքիր է, որ օսական ամանորյա ծխական մեծ թիվածքը ևս կոչվում է սրբազան կրակի անվամբ՝ *aertxuron* ²³: Կրակի և ծխական թիվածքի ֆալլոսային դերի վերաբերյալ հմմտ., օրինակ, հետևյալ տվյալները. *RV X.85.38—41* (հարսանեկան հիմն)-ի համաձայն հարսնացուին իր ամուսնուց առաջ տիրում է *Agni-* կրակի աստվածը ²⁴, իսկ ըստ արլ.—սլավ. ծխական ավանդույթի՝ հարսնացուին նախամուսնական գիշերը նստեցնում են *kapabaū* ծխական հացի վրա ²⁵:

5. Հնդ-եվր. բանաստեղծական լեզվին հատուկ հանգիստություն (alliteration) կոչվող հնարքը ²⁶ ժառանգվել է հին հայկական բանաստեղծական

²¹ Եզնիկայ վարդապետի Կողբացույ Եղծ աղանդոց. Թիֆլիզ, 1914, էջ 80:

²² Տե՛ս E. Benveniste. Sur la terminologie iranienne du sacrifice.—Extrait du Journal asiatique, 1974, p. 51.

²³ Տե՛ս В. Миллер. Указ. соч., с. 266.

²⁴ Տե՛ս Т. Я. Елпизаренкова. А. Я. Сыркин. К анализу индийского свадебного гимна (Ригведа X. 85).—Ученые зап. Тартусского гос. ун-ва. Вып. 181. Труды по знаковым системам, II, 1965, с. 176, 180—182, 187.

²⁵ Տե՛ս Вяч. Вс. Иванов, В. Н. Топоров. Исследования в области славянских древностей. М., 1974, с. 258; Г. И. Довгяло. Дохристианские религиозные представления белорусов в свете общендоевропейской мифологии и сравнительного изучения религий.—Вопросы истории древнего мира средних веков. Минск, 1974, с. 176.

²⁶ Տե՛ս Ф. де Сосюр. Труды по языкознанию (пер. с фр.). М., 1977, с. 633—649; Т. В. Гамкрелдзе, Вяч. Вс. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Ч. I. Тбилиси, 1984, с. 837—839.

ավանդույթի կողմից²⁷։ Այդ հնարքի գործադրման նպատակով «Տենչայ Սաթինիկ տիկին...»-ի ստեղծման ժամանակ կողք-կողքի են դրվել նույն երկու արմատների փոխհակադարձ շարադասությամբ կերտված ալանական սրբադան կրակի անվանումները՝ *Aert-xur- (հմմտ. օս. Aert-xūr-on իրան. Aturfarnahar) և *Xvar-aert- (հմմտ. օս. Xur-ae(r)t-xur-on, սողդ. xōr-arθ (χωρ'ῥῶ))՝ գործածված որպես հասարակ դոյականներ, այնուհետև «ծիլ, շյուղ», «ճյուղ» իմաստներն արտահայտող հայ. բաղաձայնի բառերից (բաբունակ, երիթ, րնծիլ, խաւարծի, ծիլ, նիսլոտ, նիլ, շառաւիղ, շաւիլ, շիւ, շիլ, ոգոբ, ոն, ոստ, ջով, ստեղն, ուղէշ, ուտ, ցախ են) րնտրվել է խաւարծի-ն և, այդպիսով, ստեղծվել խ-ու/ւ-ր հնչյունների կուտակում՝ «արտախուր խաւարտ <...> խաւարծի»։

Լսելիքը շոյող պատկերավորությունն ափսի է թանձրանում մեկ այլ հնարքի օղնությամբ, որը կոչվում է ստուգաբանական ֆիգուր figura etymologica (logica) և նույնպես գործածական է եղել հնդ-եվր. բանաստեղծական լեզվում²⁸, «տենչայ <...> տենչանս»։

НОВАЯ ПОПЫТКА ИНТЕРПРЕТАЦИИ ARTAXUR XAWART

Р. К. МАТИРОСЯН

Резюме

Tenčay Sat'lnik ilkin tenčans

Zartaxur xavart ew ztič xawarci

I harjicn Argawanay

(Мовсес Хоренаци, „История Армении“, I, 20/31)

На основании того факта, что Сатеник была аланкой по происхождению, в статье делается попытка с помощью осетинских данных интерпретировать загадочное словосочетание artaxur xawart из приведенного выше древнеармянского поэтического фрагмента. Слово artaxur без каких-либо затруднений можно вывести из ритуального названия огня очага-ирон. Aert-xūr-on (дигор. Aert-xor-on <art „огонь“ + xūr/xor „солнце“> + -on патронимический суффикс. Наряду с теонимом Aert-xūr-on в аланский период могло существовать и одноименное слово со значением «фарн», ср. иран. *x'arəpa- «свег», «блеск», «солнце» ≈ «фарн» > ср.-перс. farr > арм. p'ar-k' «слава» (ср. также *duš-x'arəp- «обладающий плохим фарном» > арм. t'snat «несчастный, отверженный, жалкий») наряду с теонимом X'arəpa-. Примечательно, что божеству Aert-xūr-on моллились с просьбой испослать богатство и всякое благополучие. Слово xawart гипотетически можно вывести к аланской форме, которая могла быть образована инверсией тех же иранских корней: иран. *X'ar-aθr- (ср. согд. xōr-arθ (χωρ'ῥῶ) „солнечный огонь“, о ет.

²⁷ Տենչայ В. Яч. В. С. Иванов. Использование для этимологических исследований сочетаний однокоренных слов в поэзии древних индоевропейских языках.—Этимология 1967. М., 1969, с. 51—56; В. Р. Զարթուրյան. Հնդեվրոպական տաղաչափության մի քանի առանձնահատկությունների դրսևորումները հայ հին բանաստեղծության և բանահյուսության մեջ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4, էջ 49—55։

²⁸ Տենչայ Т. В. Гамкрелидзе, В. Яч. В. С. Иванов. Указ. соч., с. 321—322, 835.

Xur-ae(r)t-xur-on) > алан. *xvar-aert- > арм. *xaw(ar)-art > xawart. В индоиранском мире ритуалы и моления выполнялись на особой площадке, на которой стелили трану или ветки, ср. др.-инд. barhis „подстилка из священной травы (при жертвоприношении)“; авест. barəziš „подушка, покрывало“ (ср. заимствованное из иранского источника арм. слово barj, -i „подушка“), barəsmān- „связка веток, которую огнепоклонники держали в руках перед священным огнем во время молитвы“. Как видно, все основные элементы присутствуют в расследуемом фрагменте: // священный огонь // ~ artaxur и xawart; // связка веток // ~ tiç xawarci; // ритуальная подушка // ~ i barjiçn. На основании рассмотренного материала можно предложить такой рабочий вариант перевода данного отрывка:

„Госпожи Сатеник жаждет artaxur xawart (resp. „благополучие“, счастье“, „фарі“ и из ритуальных подушек Аргавана—пучок веток (вызывающий любовь)).“